

# Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 188

Սրբագործութեան բոլոր ծուռ տեսանկիւնները տեղաւորում են երկու գլխաւոր հերետիկոսութիւնների տակ, որոնք հակառակում են աստուածաշնչային ուսուցումներին եւ աղաւաղում են դրանց, ու այդպիսով տապալում եւ տկարացնում են հաւատացեալի սրբութեան աճը: Յաւօք սրտի, Քրիստոնէաներ հեշտութեամբ քաշել են դէպի այդ երկու ծայրայեղութիւնները: Այս դասում մենք կ'սկսենք նկատի առնել այս հերետիկոսութիւնների առաջինը՝ ճանաչած որպէս օրինապաշտութեան հերետիկոսութիւնը:

**Օրինապաշտութիւն** – Քրիստոնէական աստուածաբանութեան մէջ օրինապաշտութիւնը Աստուծոյ օրէնքի թիրիմացութիւնն, աղաւաղումն, կամ չարաշահումն է: Կան օրինապաշտութեան տարբեր կերպեր՝ ոմանք շատ ակնյայտ եւ միւսները բաւականին նուրբ: Օրինապաշտութեան առաջին եւ ամենավտանգաւոր կերպը այն է որը ուսուցանում է թէ պահելով տարբեր օրէնքներ, անելով բարի գործեր, մարդս կարող է փրկութիւն ձեռք բերել:

Նոր Կտակարանում մենք հանդիպում ենք Փարիսեցիներին՝ «առանձնացածները», որոնք ջոկեցին իրենց հասարակ ժողովրդից, եւ պարծենում էին իրենց անձնական ուղղարարութիւնից որպէս Աբրահամի որդիք, համարելով իրենց օրէնքի բծախնդիր հնազանդութիւնը որպէս իրենց Աստուծոյ առջեւ ընդունւած լինելու միջոցը: Սակայն Յիսուսը խստօրէն յանդիմանեց նրանց, անուանելով նրանց կեղծաւորներ, որոնք ոչ միայն չտեսան իրենց պիղծ մեղաւոր վիճակը, բայց նաեւ չհասկացան սուրբ ու արդար Աստուծոյ պահանջքը. եւ ուստի Աստուծոյ հեղինակաւոր օրէնքը մարդկանց աւանդութիւնների հետ փոխեցին (Մատթէոս 15:3, 7-9, 23:23-28, 33):

Քրիստոսը հռչակեց Աստուծոյ դատաստանը Փարիսեցիների վրայ, երեւան հանելով նրանց՝ որը կենտրոնանում էին օրէնքի արտաքին առումների վրայ մինչ աննկատում դրա իսկական ներքին ու հոգեւոր իմաստը. եւ ուստի մերժում էին ճշմարիտ ուղղարարութիւնը որն Աստուծոց է, եւ փոխարէն ընդգրկում էին իրենց մարդաշէն ուղղարարութիւնը, որն կեղծ ու անիծեալ է Աստուծոյ առջեւ: Մենք տեսնում ենք այսպէս օրինապաշտութիւնը որը կենդանի է եւ ծաղկում է հենց մեր օրումը, բոլոր համաշխարհային կրօններով, որոնք մերժում են Աստուածաշնչի Աստուծուն ու Նրա Աւետարանը, եւ փոխարէն հնարել են իրենց սեփական օրէնքների չափանշերն, կանոններն ու սովորութիւնները, որը պահում են, եւ որոնցով նրանք ձգտում են հասնել սրբութեան ու փրկութեան: Բոլոր այսպէս մարդաշէն օրէնքներն ու սովորութիւնները անընդունելի ու գարշելի են Աստուծուն:

Նոր Կտակարանում մենք նաեւ տեսնում ենք օրինապաշտութեան մի ուրիշ վտանգաւոր կերպը ինչպէս արտայայտուած Յուդայացնողների (Judaizers) կողմից: Յուդայացնողները կեղծ ուսուցիչներ էին որոնք մուտք էին գործել եկեղեցում եւ ուսուցանում էին Հեթանոս Քրիստոնէաներին որ բացի Քրիստոս փրկութեան համար հարկ էր նրանց պահելին որոշ Մովսիսական օրէնքներ: Պօղոս առաքեալը ուժգնօրէն դիմադրեց ու պախարակեց Յուդայացնողներին, քանի որ նրանք ձգտում էին աւելացնել գործեր աւետարանին որպէս փրկութեան համար անհրաժեշտ, եւ այդպիսով աղաւաղում էին Քրիստոսի ճշմարիտ աւետիսը (Գաղատացիս 1:6-8, 3:1-3): Պօղոսը զգուշացրեց հաւատացեալներին որ բոլոր նրանք որոնք ցանկանում են աւելացնել որեւէ գործեր որպէս իրենց փրկութեան մաս, իրականում վերադառնում են օրէնքի բռնապետութեան ու անէծքին, եւ ուստի դառնում են պարտական պահելու ամբողջ օրէնքը, որովհետեւ Աստուած պահանջում է բոլորովին կատարելութիւն (Երկրորդ Օրինաց 27:26, Մատթէոս 5:48, Գաղատացիս 3:10-12, 5:1-4, Յակոբոս 2:10): Եւ եթէ այդ կատարին նրանք կ'ուրանային փրկութեան համար եղած Քրիստոսի կեանքի ու մահուան բացարձակ բաւականութիւնը, եւ կ'թողնէին Աստուծոյ շնորհքն ու աւետարանը: Բայց Պօղոսը վստահ էր որ բոլոր նրանք որոնք յիրաւի փրկւած էին կ'պահուէին այդպէս հերետիկոսութիւնից (Գաղատացիս 5:10):

Փրկութիւնը պահանջում է կատարեալ ուղղարարութիւն, եւ այդ միայն գտնուում է Քրիստոսում, որը Իր կեանքով ու մահով յազեցրեց աստուածային պահանջքը: Աստուած շնորհաբար վերագրում է Քրիստոսի ուղղարարութիւնը մեզ հաւատքով ու միմիայն հաւատքով (Հռովմայեցիս 3:20-22, Գաղատացիս 3:11-14, Բ. Տիմոթէոս 1:8-9): Սա էր հենց այն հարցը որի համար 16րդ դարուայ Բողոքական Վերակազմողները պայքարեցին, քանի որ Քրիստոսի ճշմարիտ աւետարանը այդպէս մթազնւած էր միջնադարեան եկեղեցում: Վերակազմողներ հռչակեցին որ արդարացումը շնորհքով է միայն, հաւատքի միջոցով է միայն, ու Քրիստոսում է միայն: Ինչպէս տեսանք արդարացման ուսումնասիրութիւնում, թէ Կաթոլիկ եւ թէ Օրթոտոքս աստուածաբանութիւնները սովորեցնում են արդարացման մի համակատար տեսանկիւն՝ ուր աստուածային շնորհքի ու մարդու գործերի համագործակցութիւնը անհրաժեշտ է փրկութեան համար: Երկուսի համար էլ, արդարացնել արդար հռչակել չի այլ արդար դարձնել է: Ուստի, երկուսն էլ ուսուցանում են փրկութեան մի օրինապաշտ տեսանկիւն, շատ նման առաջին դարուայ Յուդայացնողներին: Եւ ինչպէս Պօղոսը զգուշացրեց, այսպէս մի աւետարան մի «ուրիշ» աւետարան է, եւ իրականում այդ բոլորովին ոչ մի աւետարան է, որովհետեւ դրա վախճանն է անէծք:

Կայ եւս օրինապաշտութեան մի ուրիշ աւելի նուրբ կերպը, որը վերաբերում է աւելի մասնաւորապէս Քրիստոնէայի սրբագործութեան կեանքին՝ որը կարող է նաեւ հեշտութեամբ թակարդել Քրիստոնէաներին՝ պատճառելով մեծ խառնաշփոթում, ցաւ, ու խոչընդոտ իրենց սրբութեան հետապնդմանը մէջ, որը նկատի կ'առնենք յաջորդ դասում: